Երեւան
Սպեփանակերտ

24-28 փետրվարի, 2020թ.

33-Դ
Հայ Դատի

հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողով

www.ancnews.info

ՀՅԴ Բյուրոյի նախաձեռնությամբ 2019 թ. նոյեմբերի 9-ին, Բրյուսելում տեղի ունեցավ Հայ Դատի աշխատանքներին նվիրված դրամահավաք

Դրամահավաքին մասնակցում էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Ուղերձ էին հղել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն:

Ավելի քան 100 բարերաներ աշխարհի տարբեր երկրներից մասնակցում էին դրամահավաքին:

Ներկայացվեց մանրամասն հաշվետվություն նախորդ դրամահավաքից (2016 թ. դեկտեմբեր, Փարիզ) ի վեր գոյացած գումարների և կատարված ծախսերի մասին: 2016 թ. դրամահավաքի խոստումներից հավաքվել է 1,838,508.10 ԱՄՆ դոլար. ծախսերը եղել են՝ $1,930,289.12. պակասուրդը՝ $91,781.02: Ծախսերի հիմնական ուղղություններն եղել են Հայ Դատ Բրյուսելի, Մոսկվայի և Մերձավոր Արևելքի գրասենյակները, Հայ Դատի կենտրոնական խորհուրդն ու գրասենյակը, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնը, 2019 թ. Արցախում կայացած երկու համաժողովները և այլն:

Ավարտին հայտարարվեց, որ շուրջ 2,400,000 ամերիկյան դոլար նվիրաբերվել է Հայ Դատի գրասենյակների և հանձնախմբերի աշխատանքների համար և նշվեց, որ դրամահավաքը շարունակվում է:

Այս առիթով ՀՅԴ Բյուրոն հրապարակեց հաղորդագրություն, որտեղ ասվում է. «Սա մեկ անգամ ևս վկայությունն է այն բանի, որ նույնիսկ այս օրերին տարբեր երկրներում առկա տնտեսական ճգնաժամերին, մեր ազգի զավակները պատրաստ են իրենց ներդրումն ունենալ Հայ Դատի պայքարում, քանզի այն նվիրական է: ՀՅԴ Բյուրոն իր շնորհակալությունն է հայտնում բոլոր նվիրատուներին, դրամահավաքի կազմակերպիչներին և Հայ Դատի նվիրյալներին»:

Հայ Դատի Հանձնախմբի հիմնադրությունը

[...]Հ.Յ. Դաշնակցությունը ստիպված է եղել իր սեփական ուժերով նախաձեռնել Հայ Դատի արծարծման և պաշտպանության գործը: Նա էր, որ ձևակերպեց հայ ժողովրդի ազգային բաղձանքները, միջազգային նոր պայմանների համապատասխան, և հրապարակ դրեց Հայ Դատի բանաձևը [...]: Նա էր, որ ձեռնարկեց Հայ Դատի Պաշտպանության ֆոնդի հանգանակությունը, 1944-ի սկիզբին, և հայ ժողովուրդը խանդավառությամբ արձագանքեց՝ կարճ ժամանակի ընթացքում տալով 165,000 դոլար Հայ Դատի պաշտպանությանը: Նա էր, վերջապես, որ համազգային մարմին ստեղծելու նոր և ապարդյուն փորձից հետո, 1944 թ. վերջում կազմեց Հայ Դատ հանձնախումբը (Armenian National Committee) Նյու Յորքում, ազգային գետնի վրա՝ նրան վստահելով Հայ Դատի պաշտպանության գործը:

«Հայրենիք» Տարեգիրք-տոնացույց – 1947, Ե. Տարի

Խմբագիր՝ Սիմոն Վրացյան

Հայ Դատի Հանձնախբերն ու գրասենյակները հիմնադրությունը

Հ.Յ. Դաշնակցության Հայ Դատի հանձնախմբերը այդ անունով գործում են շուրջ յոթ տասնամյակից ավել, սակայն նրանց ակունքները գնում են ավելի ետ: Առաջին աշխարհամարտի ավարտին, ամերիկայի միացյալ նահանգներում կազմված «Հայաստանի անկախության համար ամերիկյան կոմիտեն» (American Committee for the Independence of Armenia), իսկ Հայաստանի խորհրդանացումից հետո՝ նաև «Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը» եղել են այն կառույցները, որոնց միջոցով Հայ Յեղափոխական Դաշնակցությունը միջազգային մակարդակով՝ քաղաքական, հարաբերական և քարոզչական աշխատանքներ տանում էր հանուն հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչման և Հայաստանի անկախության:

Երկրորդ աշխարամարտի ավարտին, 1944, ամերիկայի միացյալ նահանգներում ՀՅԴ-ն կազմեց Հայ Դատի յանձնախումբ, (Armenian National Committee), որ Նյու Յորքում ունեցավ գրասենյակ և հայ ժողովրդի իրավունքների՝ հատկապես Թուրքիո բռնագրավված հողերի վերադարձի խնդիրը ներկայացուց նորակազմ Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ):

Հայոց ցեղասպանության հիսունամյակի առթիվ Սփյուռքի բոլոր համայնքներում Դաշնակցությունը կազմեց հատուկ հանձնախմբեր, որոնք այնուհետև կոչվեցան Հայ Դատի հաձնախմբեր, որոնք գործում են առ այսօր:

Եթե մինչև Արցախյան շարժումն ու Հայաստանի Հանրապետության վերանկախացումը Հայ Դատի հանձնախմբերի գլխավոր նպատակը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում ապահովելն էր, 1988-ին ի վեր նրանց առաջադրանքներին մաս են կազմում նաև Հայաստանի և Արցախի վերաբերող խնդիրներ, Ջավախքահայության իրավունքների պաշտպանություն, ինչպէ նաև՝ Հայոց ցեղասպանության համար արդար հատուցումը և այլ հարցեր: Յուրաքանչյուր հանձնախումբ գործում է տվյալ երկրի և կամ միջավայրի պայմաններին համաձայն, այդ պատճառով էլ նրանց օտար լեզուներով անունները երբեմն տարբեր են, բայց հայերենով միշտ՝ Հայ Դատի հանձնախումբ:

Ավելի քան յոթանասուն տարածաշրջանային, շրջանային, նահանգային և քաղաքային մակարդակի Հայ Դատի հաձնախմբեր գործում են երեսունից ավելի երկրներում: Գործում են նաև Սիդնեի, Բեյրութի, Թեհրանի, Բուենոս Արեսի, Գլենդէլի (շրջանայինև տեղական), Նյու Յորքի և Օտտավայի գրասենյակները:

Վերջին տասնամյակներին, միջազգային քաղաքական կյանքի կարևորագույն մայրաքաղաքներում՝ Վաշինգտոն, Մոսկվա, Բրյուսել, ինչպէս նաև Բեյրութում հաստատված են Հայ Դատի տարածաշրջանային գրասենյակներ:

Այս գրասենյակներից առաջինը հաստատված է 1984-ին, Վաշինգտոնում: Այն գործում է Armenian National Committee of America (ANCA Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբ) անունով: Այն հանդես է գալիս որպես ամերիկահայության քաղաքական առաջադրանքներն ու շահերը ամերիկյան քաղաքական շրջանակներում հետապնդող գլխավոր կառույց:

Մովկայի գրասենյակը հաստատվեցավ 1993 թվականին և հիմնականում գործում է որպես ՀՅԴ Բյուրոյի քաղաքական գրասենյակ:

Բրույսելի գրասենյակը հաստատվեցավ 2002-ին, որպես Հայ Դատի Եվրոպայի հանձնախումբի գրասենյակ, European-Armenian Federation for Justice and Democracy անունով: 1990-ականների սկիզբներից, գլխավորապես ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպություններում Արցախի հարցին պաշտպանության նպատակով, ժնևում հաստատվեց Հայ Դատի գրասենյակը: Իսկ 2001-ին Եվրպայի գրասենյակը ժամանակավորապես հաստատվեցավ Փարիզում:

2005 թ. Բեյրութում բացվեց Հայ Դատի Միջին Արևելքի գրասենյակը, որ ունի տարածաշրջանային առաքելություն, հատկապես՝ արաբական և իսլամական երկրների քաղաքական և հասարակական շրջանակներում Հայաստանի, հայության և հայկական հարցերի նկատմամբ դրական կեցվածք ձևավորելու առաջադրանք:

Եվ վերջապես՝ Երևանում, Հայ Դատի Կենտրոնական խորհրդի ղեկավարությամբ գործում է ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի կենտրոնական գրասենյակը, որը համադրում է Հայ Դատի աշխատանքները և կազմակերպում է Բյուրոյի միջազգային հարաբերությունները:

www.eafjd.eu www.anca.org

www.ancme.net www.ancnews.info

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11, 2019

ԱՐՑԱԽԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

PRO ARTSAKH FORUM
ПРО АРЦАХ ФОРУМ
FORUM PRO ARTSAKH
FORO PRO ARTSAKH

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Friends of Artsakh Forum:
Cooperation for the sake of Justice and Peace

Форум друзей Арцаха:
Сотрудничество во имя справедливости и мира

Forum des Amis de l'Artsakh:
Coopération pour la Justice et la Paix

Forum der Freunde von Artsakh:
Zusammenarbeit für Gerechtigkeit und Frieden

Foro de los Amigos de Artsaj:
Cooperación en nombre de la Justicia y de la Paz

منتدى أصدقاء ارتساخ :
التعاون من أجل العدالة و السلام

Ստեղծվեց Արցախի Բարեկամների «Փրո Արցախ» Միջազգային Ցանցը

11 հոկտեմբերին Ստեփանակերտի է ունեցել ՀՅԴ-ի եւ Արցախի արտաքին գործոց նախարարության կազմակերպած՝ «Համագործակցություն հանուն արդարության եւ խաղաղության» խորագիրը կրող Արցախի բարեկամների քառօրյայ համաժողովը, որին մասնակցել են 30 երկիրներից, 150 հասարակական-քաղաքական գործիչներ եւ մտաւորականներ:

Համաժողովին ուղերձով հանդես է եկել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Ելոյթներ ունեցան Արցախի Հանրապետության ազգային ժողովի նախագահը, պետական նախարարը, արտաքին գործերի, կրթության, գիտության, եւ սպորտի, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարարները, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչը, Հայ Դատի Վաշինգթընի եւ Բրուսելի գրասենյակների ներկայացուցիչները:

Լուսարյակի տակ առնվեցան Արցախի գերիշխանության պահպանման անհրաշետությունը, միջազգային մակարդակի վրա նրա ներկայության կարեւորությունն ու այս առումով Արցախի բարեկամ բարձրաստիճան անձնավորություններին ունեցած մեծ ու օգտաշատ ներդրումը:

Համաժողովի ավարտին, մասնակիցները որդեգրեցին հռչակագիր, ուր նրանք հաստատում են.-

«Մեր աջակցությունն ենք հայտնում Արցախի ժողովրդին՝ ազատության և ժողովրդավարության ճանապարհին, ինչպես նաև հանրապետության անկախության միջազգային ճանաչմանն ուղղված նրա ջանքերին»:
«Պատրաստակամ ենք այսուհետ ևս զարգացնելու և խորացնելու երկխոսությունն Արցախի Հանրապետության հետ՝ հասարակական և քաղաքական լայն շրջանակների ներգրավմամբ»:
«Հայտարարում ենք Արցախի բարեկամների միջազգային ցանց՝ «Պրո Արցախ», ստեղծելու մասին՝ միջազգային հարթակում Արցախի մասին տեղեկացվածությունը բարձրացնելու, նրա ժողովրդի օրինական շահերը պաշտպանելու, միջազգային գործընթացներում Արցախի ներգրավմանն աջակցելու նպատակով»:

Վաշինգտոնում կանցկացվի «Ծագող առաջնորդներ. կարիերայի զարգացում և քաղաքացիական կրթություն» սեմինարը, հայտագրումը բաց է

ԱՄՆ Հայ դատի հանձնախումբն ոգևորված է հյուրընկալել «Ծագող առաջնորդներ. կարիերայի զարգացում և քաղաքացիական կրթություն» (Rising Leaders: Career Development and Civic Education) երկրորդ ամենամյա ծրագիրը, որը տեղի կունենա մարտի 22-ից 24-ը Վաշինգտոնում՝ նվիրված երիտասարդության հզորացմանը, քաղաքականության ուսումնասիրմանը և լրատվամիջոցներին:

Հանձնախումբը հերթական անգամ միավորվել է Հայաստանի երիտասարդական ֆեդերացիայի Արևելյան և Արևմտյան Ամերիկայի Միացյալ Նահանգների և Georgetown-ի համալսարանի հայ ուսանողների ասոցիացիայի հետ՝հյուրընկալելու այս յուրօրինակ ուսանողական միջոցառումը:

Գրանցվելու համար ուսանողները կարող են այցելել anca.org/RisingLeaders և ընտրել մասնակցության երկու տարբերակներից մեկը. առաջինն առաջարկում է բնակարան 3-օրյա ծրագրի համար ($ 100), իսկ մյուսը ներառում է միայն ծրագրի վճարներ ($ 25):

Ուսանողները պատասխանատու են Վաշինգտոնից և Վաշինգտոն քաղաք մեկնելու համար: Ֆինանսական օգնությունը կտրամադրվի ըստ անհրաժեշտության և մատչելիության:

Սեմինարի ընթացքում անդրադարձ կկատարվի ԱՄՆ-Հայաստան կապերի ամրապնդմանը, Արցախի ազատությանն աջակցելուն և Հայոց Ցեղասպանության թեմայի ճանաչմանն ու ոգեկոչմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նամակ ուղարկել RisingLeaders@anca.org էլ. Փոստի հասցեին կամ պարզապես գրանցվել այսօր՝ այցելելով anca.org/risingleaders:

«Artsakh AID» փրկելու կոչ՝

Հայ Դատը կը յիշեցնէ ամերիկահայութեան, որ ամավարկին վերջանական որոշումը կը պատկանի Քոնկրեսին: «Անհրաժեշտ է, որ Քոնկրեսը փրկէ Արցախին յատկացուելիք օժանդակութիւնը: Ձեր ծերակուտականները եւ ներկայացուցիչները այդ մէկը պիտի կատարեն, եթէ դուք՝ ձեր ընտանիքները եւ ընկերները, անոնց մղէք գիտակցելու, որ անիկա ձեզի համար առաջնակարգ հարց մըն է», կ՛ըսուի Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի յայտարարութեան մէջ:

Նշենք, որ Հայ Դատը անցեալ շաբաթ ներկայացուցած էր 2021ի պետական ամավարկին մէջ իր առաջնահերթութիւնները՝ կոչ ընելով քոնկրեսականներուն, որ նկատի ունենան հետեւեալները.

– Առնուազն 10 միլիոն տոլարի աջակցութիւն Արցախի մարդասիրական կենսական նպաստներ տրամադրելու ջանքերուն եւ ամբողջացնելու համար «Հէյլօ Թրասթ»ի կողմէ այնտեղ շարունակուող ականազերծման աշխատանքերը.

– Առնուազն 90 միլիոն տոլարի աջակցութիւն Հայաստանին՝ ամրապնդելու համար Միացեալ Նահանգներու հետ քաղաքական, տնտեսական եւ ռազմական գործակցութիւնը.

– Արգիլումը Ատրպէյճանին որեւէ տնտեսական աջակցութեան, մինչեւ այն ատեն, որ Պաքուի կողմէ Արցախի եւ Հայաստանի դէմ սպառնալիքները կը շարունակուին:

Արշաւին միանալու համար՝ այցելել anca.org/aid կայքէջը:

Այս յաղթանակը արդիւնքն է տասնամեակներ շարունակ Միացեալ Նահանգներու մէջ տարուած անդուլ պայքարին. ան յատկապէս արգասիքն է ԱՄՆի մեր Հ.Յ.Դ. կառոյցներուն եւ մարմիններուն, Հայ Դատի յանձնախումբերուն եւ գրասենեակներուն հետեւողական, ծրագրուած եւ ճշգրտուած աշխատանքներուն, որոնց մասնակից եղաւ նաեւ ամերիկահայ համայնքի մէկ կարեւոր մասը: Բոլորին վարձքը կատար:

Յակոբ Տէր Խաչատուրեան
Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ

ՀՅԴ Հայ Դատի Կենդրոնական Խորհուրդը կ'ողջունէ Սուրիոյ Խորհրդարանի Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան բանաձեւի որդեգրումը եւ կը շնորհաւորէ Սուրիահայութիւնը այս կարեւոր իրագործումին առթիւ:

Տասնամեակներէ ի վեր Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբը քաղաքական, յարաբերական, քարոզչական, մշակութային հետեւողական աշխատանք կը ծաւալէ հանրային կարծիք ձեւաւորելով՝ Սուրիոյ խորհրդարանի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման բանաձեւը հաստատելու համար:

ARMENIAN LEGAL CENTER
FOR JUSTICE AND HUMAN RIGHTS
www.armenianlegal.org



www.armeniangenocidereparations.info

Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն
www.akunq.net



www.talaatpasha.net